Fugenfüller
Ծեփամածիկ գիպսային

Նկարագրություն

- Սպիտակ
- Հանքային
- Էկոլոգիապես մաքուր և անվտանգ

Բաղադրություն

Գիպս, ցելյուլոզային հավելանյութեր:

Նշանակություն

Ծեփամածիկը նախատեսված է չոր միջավայրում ներքին հարդարման աշխատանքներն ավարտին հասցնելու, չդեֆորմացվող՝ քարե, գիպսային, բետոնային, կրային և այլ մակերեսները հարթեցնելու, խոշոր ճաքերը և անցքերը լցնելու համար:

Մակերեսի նախապատրաստում

- Նախքան քսելը վերացնել հիմքի թույլ հատվածները, լայնացնել ճեղքերը:
- Մաքրել մակերեսը կեղտից, փոշուց, յուղի և ներկի հետքերից:
- Նախքան աշխատանքները սկսելը անհրաժեշտ է ակրիլային խտանյութով մշակել թույլ հատվածները և ներծծվող մակերեսները:
- Խորհուրդ է տրվում մակերեսը մշակել <ՇԵՆ> ֆիրմայի ակրիլային կոնցենտրատով:
- 4 ժամ անց սկսել հարդարման աշխատանքները:

Շաղախի պատրաստում

- Մաքուր տարայի մեջ լցնել12,9-13,2լ ջուր՝ 30կգ չոր շաղախի համար:
- Աստիճանաբար ավելացնել չոր շաղախը և խառնիչի օգնությամբ խառնել մինչև համասեռ խառնուրդի ստանալը:
- Պատրաստի շաղախը 5 րոպե անց կրկին խառնել, որից հետո այն պատրաստ է օգտագործման համար:

Օգտագործում

- Համասեռ խառնուրդը մակերեսին քսել չժանգոտվող ծեփիչի կամ մածկաթիակի օգնությամբ:
- Աշխատանքներն իրականացնել+10°C-ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում:
- Հարթ մակերես ստանալու համար չորանալուց հետո կատարել մակերեսի հղկում:
- Աշխատանքներն ավարտելուց հետո գործիքները լվանալ ջրով:
- Օգտագործված պարկերը և շաղախի մնացորդներն աղբահանել սահմանված կարգով:
- Շաղախի արագ չորացման համար ապահովել տարածքի օդափոխությունը:

Քսվող մակերեսի ջերմաստիճան	+10°C-ից +30°C
Ջրի քանակ1կգ չոր շաղախի համար	430 - 440 մլ
Ջրի քանակ 30կգ չոր շաղախի համար	12,9 - 13,2լ
Շերտի հաստություն	0,2մմ - 5մմ
Թաց շաղախի օգտագործման ժամկետ	մինչև 30 րոպե
Քսված շերտի կծկում	ոչ ավել քան 0.8մմ/մ
Շերտի 1մմ հաստության դեպքում չոր շաղախի ծախս Նյութի ավելի ստույգ ծախսը կախված է օգտագործվող մակերեսի հարթությունից և քսվող ծեփամածիկի շերտի հաստությունից:	0.8 - 1 կգ / 1 մ²
	30կգ / 24 - 30 մ²

Փաթեթավորում

Թղթե և պոլիպրոպիլենային պարկեր՝ 30 կգ զտաքաշով:

Պահպանում

Պահպանել չոր միջավայրում և չվնասված պարկերով փայտյա տակդիրների վրա, +40՛C-ից ոչ բարձր ջերմաստիճանի և 75%-ից ոչ բարձր օդի խոնավության պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 12 ամիս:

Անվտանգության կանոններ

- Պահել երեխաների համար անհասանելի վայրում:
- Աշխատանքներն իրականացնել՝ պահպանելով շնչառական օրգանների ապահովությունը:
- Խուսափել մաշկի հետ շփումից:
- Աչքի մեջ ընկնելու դեպքում աչքը լվանալ մաքուր ջրով, անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

Ուշադրություն

- Խառնուրդի խտանալուց հետո չի թույլատրվում ջուր ավելացնել, քանի որ դա կհանգեցնի խառնուրդի կպչողունակության նվազմանը և կնպաստի ճաքերի առաջացմանը:
- Այլ պայմաններում աշխատանքների իրականացման դեպքում վերոնշյալ ցուցիչները կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների ոչ ճիշտ կատարման դեպքում: դեպքում: